Տ. ՄՈՒՇԵՂ ԱԲԵՂԱ ԲԱԲԱՅԱՆ

(ավազանի անունը՝ Նելսոն)

Ծնվել է 1978 թ. Գորիսի շրջանի Տաթև գյուղում:

1984-1994 թթ. սովորել է Տաթևի Ս. Առաքելյանի անվան միջնակարգ դպրոցում:

1994 թ. ընդունվել է Մայր Աթոռ Ս. Էջմիածնի Գևորգյան Հոգևոր Ճեմարան և այն ավարտել 2000 թ.:

2000 թ. Վեհափառ Հայրապետի տնօրենությամբ աշխատանքի է անցել Վեհարանում որպես Մայր Աթոռ-թեմեր (այժմ՝ Դիվանապուն) բաժնում քարտուղար և Վեհափառ Հայրապետի արարողապետ:

2000-2001 թթ. Հայաստանի Ամերիկյան Համալսարանում հետևել է «Կառավարման դասընթացներ ճեմարանականների համար» ծրագրին:

2001 թ. սեպտեմբեր-դեկտեմբեր ամիսներին սովորել է Ժնևի համալսարանի աստվածաբանական ֆակուլտետին կից Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի «Բոսսե» ինստիտուտում:

2002 թ. ապրիլի 11-ին պաշտպանել է ավարտաճառ «Էջմիածնի միաբանությունը և նրա հոգևոր վերազարթոնքն ըստ Առաքել Դավրիժեցու» թեմայով՝ արժանանալով «քաջալավ» գնահատականի:

2002 թ. ապրիլի 28-ին, Սուրբ Խաչի երևման տոնին, ձեռամբ Տ. Նավասարդ եպս. Կճոյանի ձեռնադրվել է կուսակրոն քահանա: